Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-206[10]-19.12.2017-ՊԻՄԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-135 օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում «սահմանադրական դատարանի անդամները» բառերը փոխարինել «Սահմանադրական դատարանի դատավորները» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի ուժի մեջ մտնելու պահից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ օրենքների նախագծերի փաթեթում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

	Առաջարկի փոփոխության, լրացման) հեղինակը	Օրենքի նախագիծը, նախագծի մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
	ՀՀ ԱԺ Ելք խմբակցություն	«Սահման ադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ	1) «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-206-07.12.2017,19.12.2017-ՊԻՄԻ-011/1) (հետայսու՝ Նախագիծ) 18-րդ հոդվածում (Սահմանադրական դատարանի բնականոն գործունեության ապահովումը) ավելացնել նոր՝ «4-րդ» մաս. « 4. Սահմանադրական դատարանը աշխատակարգային որոշմամբ ընդունում է աշխատակարգ՝ սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելու նպատակով: Սահմանադրական	**Ընդունվել է մասնակի. Նախագծի** 62-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «8.Սահմանադրական դատարանի աշխատակարգը ընդունվում, դրանում փոփոխություններ եւ լրացումներ կատարվում են	**Ընդունվել է մասնակի**

			դատարանի աշխատակարգը հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով:	Սահմանադրական դատարանի՝ դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված աշխատակարգային որոշմամբ: Սահմանադրական դատարանի աշխատակարգը հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով:»:	
			2) Նախագծի 71-րդ հոդվածում ավելացնել նոր՝ «7-րդ» մաս. « 7. Դատավարության կամ գործով կողմի՝ դատարաններին կամ Գլխավոր դատախազին սույն հոդվածում նշված գործերով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով	**Չի ընդունվել.**	**Չի ընդունվել**

			Սահմանադրական դատարան դիմելու միջնորդությունը պետք է պարունակի դրույթի կամ դրույթների Սահմանադրությանը հակասելու հիմնավոր կասկած:		
			3) Նախագծում ավելացնել նոր՝ 87-րդ հոդված Հոդված 87. Դատական ծախսերը և արդարացի հատուցումը 1.Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից, ներկայացուցչին խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից: 2. Եթե Սահմանադրական դատարանը անհատական դիմումի հիման վրա կայացրել է սույն օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված որոշում, ապա Սահմանադրական դատարանը որոշում է դիմողին տրամադրել արդարացի փոխհատուցում: 3. Դատական ծախսերի և արդարացի փոխհատուցման դիմումը	**Չի ընդունվել.**	**Չի ընդունվել.**

			Սահմանադրական դատարան է ներկայացվում Սահմանադրական դատարանի որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից տասնօրյա ժամկետում: 4. Դատական ծախսերի և արդարացի փոխհատուցման հարցը Սահմանադրական դատարանը լուծում է աշխատակարգային որոշմամբ՝ դիմումը ստանալուց հետո երկամսյա ժամկետում: Դիմումին ներկայացվող պահանջները սահմանվում են Սահմանադրական դատարանի աշխատակարգով: Հաջորդող հոդվածների հերթական համարները մեկով ավելացնել:		
	ՀՀ Կառավարություն	«Սահման ադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետությ ան սահմանադրակ ան օրենքի նախագիծ	«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագծի մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են դատավորի անվտանգությանը, անձեռնմխելիությանը, անկախությանը, նյութական ապահովությանն ու այլ երաշխիքներին, դատավորին ներկայացվող պահանջներին,	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ (Տես՝ նախագծերի փաթեթին կից ներկայացված տեղեկանքը):	**Ընդունվել է.**

			վարքագծի կանոններին (մասնավորապես՝ 4, 6, 7, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 50 հոդվածներ) համապատասխանեցնել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի համապատասխան կարգավորումներին:		
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 12, մաս 1, կետ 1	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ավարտվել է նրա լիազորությունների ժամկետը»:	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է.**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի	Նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասում «պաշտոնավարման տարիքը» բառերը փոխարինել «լիազորությունների ժամկետն ավարտվելու» բառերով:	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է.**

		նախագիծ, հոդված 17, մաս 2			
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 42, մաս 1	Նախագծի 42-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Սահմանադրական դատարանը, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու կապակցությամբ նաեւ գործով զեկուցող դատավորը Սահմանադրական դատարանի նախագահի գիտությամբ իրավասու է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու փաստաթղթեր, տեղեկություններ եւ այլ նյութեր, փորձաքննություններ, բացառությամբ իրավունքի հարցերով փորձաքննությունների, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ պահանջելու նրանց տրամադրության տակ գտնվող նյութեր:»: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասը հետևյալ խմբագրությամբ՝ «4. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական	**Ընդունվել է.** Նախագծում և դրան համապատասխան նաև կից ներկայացված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ :	**Ընդունվել է.**

			անձանց կողմից փաստաթղթեր, տեղեկություններ եւ այլ նյութեր տրամադրելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ կատարման ժամկետները խախտելը առաջացնում է վարչական պատասխանատվություն:»:		
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 46, մաս 4	Նախագծի 46-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «4. Սահմանադրության 168-րդ հոդվածի 11-րդ կետով նախատեսված գործերով Սահմանադրական դատարանում որպես գլխավոր դատախազի ներկայացուցիչ հանդես է գալիս նրա տեղակալը:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն :	**Ընդունվել է.**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ,	Նախագծի 61-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3. Սահմանադրական դատարանի ըստ էության որոշումները եւ եզրակացությունները վերջնական են եւ ուժի մեջ են մտնում Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում հրապարակելու օրվանից: Սահմանադրական դատարանի	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է.**

		հոդված 61, մաս 3, հոդված 62, մաս 10	որոշումներն ու եզրակացությունները պարտադիր հրապարակվում են նաեւ նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով, ինչպես նաեւ Սահմանադրական դատարանի տեղեկագրում:»: Նախագծի 62-րդ հոդվածի 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «10. Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք՝ որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաեւ հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով եւ Սահմանադրական դատարանի		

			տեղեկագրում:»:		
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 66, մաս 2	Նախագծի 66-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 2. Այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանի որոշմամբ նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ ճանաչվել է Սահմանադրությանը հակասող եւ սահմանվել է նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ, ապա Կառավարությունը մինչեւ այդ ժամկետի ավարտը համապատասխան օրենքի նախագիծ կամ նախագծերի փաթեթ ներկայացնելու միջոցով ապահովում է որոշման կատարումը:	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է.**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ,	Նախագծի 68-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «7. Սույն հոդվածի 1-ին մասում նշված գործերը Սահմանադրական դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը Սահմանադրական դատարանի	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է.**

		հոդված 68, մաս 7, մաս 9, կետ 4, մաս 12	գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արդյունավետ կերպով բացահայտմանը:»: 9-րդ մասի 4-րդ կետը՝ հետևյալ խմբագրությամբ՝ 4) վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու եւ նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին: Նույն հոդվածի 12-րդ մասը հետևյալ խմբագրությամբ՝ 12. Անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ իրավական ակտերի համապատասխան դրույթներըկորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ		

			միաժամանակ:		
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 72, մաս 1, մաս 6	Նախագծի 72-րդ հոդվածից հանել 6-րդ մասը, իսկ 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 1. Մինչեւ Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաեւ հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը՝ վերպետական միջազգային կազմակերպություններին անդամակցության կամ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերով Սահմանադրական դատարան է դիմում Ազգային ժողովը:	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է.**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի	Նախագծի 74-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով՝ «7. Եթե միջազգային պայմանագիրը էապես շոշափում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավունքները, ապա	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է.**

		նախագիծ, հոդված 74	Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասը դրա վերաբերյալ պետք է համապատասխան նշում պարունակի:»:		
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 76, մաս 7, կետ 2	Նախագծի 76-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 2) անվավեր ճանաչել հանրաքվեի արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշումը, և հանրաքվեի դրված նախագիծը համարել ընդունված կամ անվավեր ճանաչել հանրաքվեի արդյունքները:	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է.**
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 78, մաս 5	Նախագծի 78-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ ենթակետից հանել ա. պարբերությունը:	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է.**

		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 82, մաս 11, 12	Նախագծի 82-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «11. Դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ: 12. Եթե խիստ նկատողություն ստանալու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, նկատողություն ստանալու օրվանից՝ մեկ տարվա ընթացքում, նախազգուշացում ստանալու օրվանից՝ վեց ամսվա ընթացքում, դատավորը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա նա համարվում է կարգապահական տույժ չունեցող:»:		
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության	Նախագծի 85-րդ հոդվածի 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 10. Սահմանադրական դատարանը կուսակցության գործունեությունը կասեցնելու մասին որոշում կարող է ընդունել նրա գործունեության մեջ	**Ընդունվել է.** Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է.**

		սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 85, մաս 10	Սահմանադրությամբ և «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված՝ կուսակցության գործունեությունը կասեցնելու, իսկ կուսակցության գործունեությունն արգելելու մասին որոշում՝ Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերը բացահայտելու դեպքում:		
		«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի նախագիծ, հոդված 88	Նախագծի 88-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով՝ «Մինչև 2015 թվականի փոփոխություն-ներով Սահմանադրության 7-րդ գլխի ուժի մեջ մտնելը նշանակված Սահմանադրական դատարանի նախագահը և անդամները 12 տարվա ժամկետը լրանալուց հետո շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանա-դրությամբ սահմանված ժամկետի ավարտը:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում (հոդված 88, մաս 5):	**Ընդունվել է.**
1	**ՀՀ ԱԺ պատգամավոր Կարինե Աճեմյան**	«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի	***1.*** «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան	**Ընդունվել է.**

		Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետում «իրավասու մշտական հանձնաժողովի» բառերից առաջ լրացնել «Ազգային ժողովի» բառերը, իսկ «իրավասու մշտական հանձնաժողովի» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ նաև իրավասու մշտական հանձնաժողով)» բառերը:	լրացում:	
			2. 34-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին նախադասությունում «ղեկավար» բառը փոխարինել «նախագահը» բառով:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է.**
			3. 43-րդ հոդվածի 1-ին մասում «հատուկ ընթացակարգերի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Ազգային ժողովի գործունեության կազմակերպման» բառերը:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է.**
			4. 46-րդ հոդվածի 1-ին մասում «հատուկ ընթացակարգերի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Ազգային ժողովի գործունեության կազմակերպման» բառերը:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է.**

			5. 65-րդ հոդվածի 4-րդ մասում ««Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «սահմանադրական» բառը:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է.**
			6. 76-րդ հոդվածի 2-րդ մասում ««Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «սահմանադրական» բառը:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է.**
			7. 84-րդ հոդվածի 5-րդ մասում ««Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «սահմանադրական» բառը:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է.**
			8. 109-րդ հոդվածի 3-րդ մասում ««Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «սահմանադրական» բառը:	**Ընդունվել է ի գիտություն.** Հոդված 109-ի 3-րդ մասը ուժը կորցրած է ճանաչվել նախագծով:	**Ընդունվել է.**
			9. 125-րդ հոդվածի՝ 1) 2-րդ մասում «ժամանակավոր կամ խմբակցության հանձնաժողովի որոշմամբ» բառերը փոխարինել «ժամանակավոր հանձնաժողովի կամ խմբակցության որոշմամբ» բառերով, 2) 5-րդ մասում «հրավիրած	**Ընդունվել է մասնակի.** 2-րդ մասում կատարվել է համապատասխան փոփոխություն: 5-րդ մասում «հանձնաժողովի» բառը փոխարինվել է «մարմնի» բառով:	**Ընդունվել է մասնակի**

			հանձնաժողովի որոշմամբ» բառերը փոխարինել «հրավիրած՝ Ազգային ժողովի նախագահի, հանձնաժողովի կամ խմբակցության որոշմամբ» բառերով:		
			10. 129-րդ հոդվածի 2-րդ մասի «7-րդ մասով» բառերը փոխարինել «3-րդ մասով» բառերով:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է.**
			11. 162-րդ հոդվածի 2-րդ մասում «քարտուղարությունը, որը Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է» բառերը փոխարինել «որն Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է» բառերով:	**Ընդունվել է մասնակի.** Նախագծի 162-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «2. Մշտական հանձնաժողովի գործունեության մասնագիտական սպասարկումն իրականացնում է հանձնաժողովի քարտուղարությունը, որը Աշխատակազմի ստորաբաժանում է, գործում է մշտական հանձնաժողովի	**Ընդունվել է մասնակի**

				աշխատակարգով եւ Աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մշտական հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ:»:	
			12. 167-րդ հոդվածի 1-ին մասում ««Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «սահմանադրական» բառը:	**Չի ընդունվել.** Նշված հոդվածում խոսքը գործող օրենքի մասին է, որը սահմանադրական օրենք չէ:	**Չի ընդունվել.**
	ՀՀ ԱԺ պատգամավոր Հրայր Թովմասյան	«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագծով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1 մասով՝ «4.1) Սահմանադրության 129-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի ընդունած օրենքը.»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում:	**Ընդունվել է.**

			Նախագծով կատարել հետևյալ լրացումը. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածում՝ 1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6.Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո: Հանձնաժողովի անդամը քվեարկում է անձամբ, քվեարկության դրված հարցին՝ կողմ, դեմ կամ ձեռնպահ, իսկ պաշտոնում թեկնածուին՝ կողմ կամ դեմ: Հանձնաժողովի նիստից բացակայող հանձնաժողովի անդամը կարող է քվեարկել սույն հոդվածի 6.1-ին մասով սահմանված կարգով:», 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 6.1-ին մասով. «6.1. Ազգային ժողովի կողմից գործուղման մեկնող հանձնաժողովի անդամը կարող է հարցի քվեարկության վերաբերյալ իր որոշման մասին գրավոր տեղեկացնել հանձնաժողովի		

			նախագահին կամ նրա տեղակալին: Հանձնաժողովի անդամի ստորագրած գրությունը փակ ծրարով հանձնաժողովի նախագահին կամ նրա տեղակալին պետք է հանձնվի նախապես՝ մինչև գործողման մեկնելը: Ծրարի վրա, ինչպես նաև գրությունում նշվում է հարցի անվանումը, իսկ գրությունում՝ հարցին կողմ, դեմ կամ ձեռնպահ, ինչպես նաև պաշտոնում թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկելու մասին հանձնաժողովի անդամի որոշումը: Հանձնաժողովի նիստը նախագահողը ծրարը բացում և գրությունն հրապարակում է հարցի քվեարկությունից առաջ: Քվեարկությունից հետո գրությունը կցվում է նիստի արձանագրությանը:»:		
			Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օրենքի 24-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասում առաջին նախադասության «Քննիչ» բառը փոխարինել «Կանոնակարգի 20-րդ հոդվածի 1-ին մասում նշված քննիչ» բառերով, իսկ երկրորդ նախադությունը «Եթե» բառից հետո լրացնել	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 4-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			«Կանոնակարգի 20-րդ հոդվածի 1-ին մասում նշված» բառերով, 2) 2-րդ մասում «իրավասու» բառը փոխարինել «Ազգային ժողովի իրավասու» բառերով:»:		
			Նախագծի 3-րդ հոդվածից հանել «օրը» բառը:	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 5-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
			Նախագծի 4-րդ հոդվածում «իսկ գրությունում՝» բառերից հետո հանել «նաև» բառը:	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 6-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
			Նախագծի 6-րդ հոդվածում «երկրորդ» բառը փոխարինել «երրորդ» բառով:	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 8-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
			Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 9-րդ հոդվածում	**Ընդունվել է**

			«4) 5-րդ մասի երկրորդ նախադասության «և վերջին շաբաթվա» բառերը հանել և մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր երրորդ նախադասությամբ.»:	կատարվել է համապատասխան փոփոխություն:	
			Նախագծի 8-րդ հոդվածը լրացնել հետևալ դրույթով՝ «4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Պարտադիր քննարկման ենթակա հարցերը հերթական նստաշրջանի և նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկվում են միաժամանակ, բացառությամբ ՝ 1) սույն հոդվածի 3-րդ մասի 18-րդ կետում նշված հարցերի, որոնք հերթական նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվում են Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելուց հետո՝ երկամսյա ժամկետում. 2) սույն հոդվածի 3-րդ մասի 18.1-ին կետում նշված հարցերի, որոնք հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվում են մեկ անգամ՝ համապատասխան նախագծի առաջին	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 10-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է**

			ընթերցմամբ քննարկելու մասին հարցը հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկվելու պահից, իսկ հերթական նիստերի օրակարգի նախագծում ընդգրկվում են Կանոնակարգի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով.»,: Իսկ 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 2) 5-րդ մասի 2-րդ կետը «եզրակացությունը» բառից հետո լրացնել «, բացառությամբ՝ Կանոնակարգի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 18.1-ին կետում նշված նախագծերի» բառերով, 3) 5-րդ մասի 3-րդ կետը «չի ներկայացրել» բառերից հետո լրացնել «, բացառությամբ՝ Կանոնակարգի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 18.1-ին կետում նշված նախագծերի» բառերով,		
			Նախագծի 9-րդ հոդվածով նախատեսված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասում կատարել լրացում՝ «առաջիկա» բառը	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 11-րդ հոդվածում կատարվել է համապատասխան լրացում:	**Ընդունվել է**

			փոխարինել «հերթական նստաշրջանի առաջին հերթական նիստերի շաբաթվան նախորդող ուրբաթ օրը, ինչպես նաև մյուս» բառերով:		
			Նախագծի 11-րդ հոդվածում «մի քանի» և «առաջին եւ երկրորդ» բառերից առաջ ավելացնել «նախագիծը» բառը: 11-րդ հոդվածով նախատեսված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածում կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ՝ «8-րդ մասի 2-րդ կետը «նիստ» բառից հետո լրացնել «, իսկ արտահերթ նիստի օրակարգը, ինչպես նաև օրակարգային հարցերի նախագծերը 24 ժամվա ընթացքում տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով»:	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 13-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է**
			Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 44-րդ հոդվածում՝ 1) 6-րդ մասը «օրենքի» բառից	**Ընդունվել է.** Նշված հոդվածը նախատեսվել է նախագծի 15-րդ հոդվածում:	**Ընդունվել է**

			հետո լրացնել «նախագիծն» բառով, 2) 9-րդ մասի 2-րդ կետը «նստաշրջան» բառից հետո լրացնել «, իսկ արտահերթ նստաշրջանի օրակարգը, ինչպես նաև օրակարգային հարցերի նախագծերը 24 ժամվա ընթացքում տեղադրվում են Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:»:		
			Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 50-րդ հոդվածում՝ 1) վերնագիրը «Սահմանադրությամբ» բառից հետո լրացնել «կամ Կանոնակարգով» բառերով, 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2.1-ին մասով. «2.1. Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև Կանոնակարգի 140-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում Ազգային ժողովի հերթական նիստեր չանցկացվելու դեպքում վարչապետի ընտրության հարցը քննարկվում է	**Ընդունվել է.** Նշված փոփոխությունները նախատեսվել են նախագծի 18-րդ հոդվածում:	**Ընդունվել է**

			իրավունքի ուժով գումարվող Ազգային ժողովի հատուկ նիստում:»:		
			Նախագծի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օրենքի 56-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 1.1-ին մասով. «1.1. Եթե հարցի քննարկման ընդհանուր տևողությունը սահմանված չէ կամ Կանոնակարգով զեկուցման համար այլ ժամկետ սահմանված չէ, ապա հիմնական և հարակից զեկուցման համար հատկացվում է մինչև քսանական րոպե:»:	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 19-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
			Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 59-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2.1-ին կետով. «2.1. Պատգամավորը կարող է մեկ անգամ քվեարկությունից անմիջապես հետո՝ մինչև Կանոնակարգի 60-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով նիստը նախագահողի	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում (նախագծի հոդված 20):	**Ընդունվել է**

			հայտարարությունը, հանդես գալ իր անհատական քվեարկության էլեկտրոնային համակարգը չգործելու և քվեարկության դրված հարցին կողմ, դեմ կամ ձեռնպահ, ինչպես նաև ընտրվող պաշտոնում թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկելու իր որոշման մասին հայտարարությամբ:»:		
			Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 60-րդ հոդվածում 1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4. Ազգային ժողովի նիստին ներկա պատգամավորը քվեարկում է անձամբ, քվեարկության դրված հարցին՝ կողմ, դեմ կամ ձեռնպահ, իսկ ընտրվող պաշտոնում թեկնածուին՝ կողմ կամ դեմ, կամ կարող է հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց, իսկ Ազգային ժողովի նիստից բացակայող պատգամավորը կարող է քվեարկել սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով:». 2) 5-րդ մասի երրորդ նախադասությունը շարադրել	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում (նախագծի հոդված 21)	**Ընդունվել է**

			հետևյալ խմբագրությամբ. «Ծրարի վրա, ինչպես նաև գրությունում նշվում է հարցի անվանումը, իսկ գրությունում՝ հարցին կողմ, դեմ կամ ձեռնպահ, ինչպես նաև ընտրվող պաշտոնում թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկելու մասին պատգամավորի որոշումը:», 3) 7-րդ մասը «արդյունքների, » բառից հետո լրացնել «Կանոնակարգի 59-ր հոդվածի 2.1-ին մասով սահմանված կարգով հայտարարված որոշումների, » բառերով:		
			Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասում «քվեարկությունը» բառը փոխարինել «քվեարկությունն Ազգային ժողովի նիստը նախագահողի հանձնարարությամբ» բառերով:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում (նախագծի հոդված 22):	**Ընդունվել է**
			Նախագծի 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օրենքի 62-րդ հոդվածում 2-րդ մասի առաջին նախադասությունը «նախատեսված» բառից հետո լրացնել	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 23-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			«կամ Ազգային ժողովի որոշմամբ սահմանված» բառերով, իսկ «մեկից մինչև վեց ժամ, ինչպես նաև վեց» բառերը փոխարինել «մեկ» բառով:»:		
			Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «իր հեղինակած նախագծի քննարկման սկզբում հիմնական զեկուցողը բացակայում է և» բառերը փոխարինել «նախագծի քննարկումն հետաձգվելուց հետո հիմնական զեկուցողը» բառերով:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում (նախագծի հոդված 26):	**Ընդունվել է**
			Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասում «նիստերին» բառը փոխարինել «նստաշրջանի առաջին հերթական նիստերի շաբաթվան նախորդող հինգշաբթի, ինչպես նաև մյուս հերթական նիստերի շաբաթվան» բառերով:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում (նախագծի հոդված 29):	**Ընդունվել է**
			Նախագծի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ **Հոդված 2.** Օրենքի 77-րդ	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 31-րդ հոդվածում	**Ընդունվել է**

			հոդվածում՝ 1) 1-ին մասը «ունեն» բառից հետո լրացնել «հեղինակը, » բառով, 2) 2-րդ մասից «, իսկ նախագիծն Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգում ընդգրկվելու դեպքում՝ 24 ժամվա ընթացքում» բառերը հանել, 3) 3-րդ մասում «նախագծի» բառը փոխարինել « , ինչպես նաև միջազգային պայմանագրի վավերացման, կասեցման կամ չեղյալ հայտարարելու մասին օրենքների նախագծերի» բառերով, 4) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 4-րդ մասով. «4. Եթե նախագծի առաջին ընթերցմամբ քննարկելու մասին հարցն ընդգրկվել է Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգում և սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված ժամկետը չի լրացել, ապա գրավոր առաջարկները կարող են ներկայացվել նստաշրջանի կամ նիստի օրակարգի, ինչպես նաև	կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			օրակարգային հարցերի նախագծերն Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:»:		
			Նախագծի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օրենքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հիմնական զեկուցողի կողմից լրամշակված նախագիծը հանձնաժողովի առաջիկա նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ ներկայացվելու դեպքում այն առանց քննարկման, սույն մասի 2-4-րդ կետերով սահմանված կարգով քվեարկության է դրվում այդ նիստում»:	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 32-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
			Նախագծի 24-րդ հոդվածով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածում ավելացվող 2.2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2.2. Եթե առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի երկրորդ	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 33-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է**

			ընթերցմամբ քննարկելու մասին հարցն ընդգրկվել է Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգում և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը չի լրացել, ապա գրավոր առաջարկները կարող են ներկայացվել արտահերթ նստաշրջանի կամ նիստի օրակարգի, ինչպես նաև օրակարգային հարցերի նախագծերն Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:», 81-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկվող փոփոխությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3-րդ մասը «2-րդ» բառից հետո լրացնել «և 2.2-րդ» բառով:»:		
			Նախագծի 27-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օրենքի 96-րդ հոդվածում՝ 1) 3-րդ մասում «հերթական նիստերի երկրորդ շաբաթվա» բառը փոխարինել	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 36-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է**

			«երկրորդ հերթական նիստերի» բառերով: 2) 4-րդ մասում «նիստերին նախորդող» բառերը փոխարինել «նստաշրջանի առաջին հերթական նիստերի շաբաթվան նախորդող հինգշաբթի, ինչպես նաև մյուս հերթական նիստերի» բառերով:»:		
			Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «իր հեղինակած նախագծի քննարկման սկզբում հիմնական զեկուցողը բացակայում է և» բառերը փոխարինել «նախագծի քննարկումն հետաձգվելուց հետո հիմնական զեկուցողը» բառերով:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում (նախագծի հոդված 37):	**Ընդունվել է**
			Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից «և ժամկետը» բառերը հանել:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում (նախագծի հոդված 40):	**Ընդունվել է**
			Նախագիծը լրացնել հետևյալ	**Ընդունվել է.** Կատարվել է	**Ընդունվել է**

			բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 125-րդ հոդվածում՝ 1) 2-րդ մասում «ինչպես նաև մշտական, ժամանակավոր կամ խմբակցության հանձնաժողովի» բառերը փոխարինել «մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովի, ինչպես նաև խմբակցության» բառերով, 2) 5-րդ մասում «հանձնաժողովի» բառը փոխարինել «մարմնի» բառով:»:	համապատասխան լրացում (նախագծի հոդված 41):	
			Նախագծի 32-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օրենքի 140-րդ հոդվածում՝ 1) 4-րդ մասը «նիստերում» բառից հետո լրացնել «, իսկ առաջիկա շաբաթվա ընթացքում Ազգային ժողովի հերթական նիստեր չանցկացվելու դեպքում՝ իրավունքի ուժով գումարվող Ազգային ժողովի հատուկ նիստում» բառերով. 2) 8-րդ մասում «ստորագրաթերթը» բառը փոխարինել	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 45-րդ հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է**

			«դիմումը» բառով, 3) 9-րդ մասը «նիստերում» բառից հետո լրացնել «, իսկ Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում Ազգային ժողովի հերթական նիստեր չանցկացվելու դեպքում՝ իրավունքի ուժով գումարվող Ազգային ժողովի հատուկ նիստում» բառերով:»:		
			Նախագծի 33-րդ հոդվածով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում առաջարկվող փոփոխությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օրենքի 141-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասը «դեպքում» բառից հետո լրացնել « , ինչպես նաև Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ժամկետն ավարտվելուն կամ պաշտոնավարման տարիքը լրանալուն նախորդող վեց ամսվա ընթացքում» բառերով,	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 46-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**

			2) 3-րդ մասը «ժամկետում» բառից հետո լրացնել « , իսկ Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունների ժամկետն ավարտվելու կամ պաշտոնավարման տարիքը լրանալու հիմքով լիազորությունները դադարելու դեպքում՝ Սահմանադրական դատարանի նախագահի կողմից համապատասխան տեղեկությունն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում» բառերով,»:		
			Նախագծի 35-րդ հոդվածով նախատեսված «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 153.1 հոդվածի 1-ին մասում «նախագիծն առաջադրելու» բառերը փոխարինել «նախագիծը ներկայացնելու» բառերով:	**Ընդունվել է.** Նախագծի այժմ 48-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է**
			Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 166-րդ հոդվածը «բացառությամբ՝» բառից հետո լրացնել «5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1-ին կետի, » բառերով:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում (նախագծի հոդված 51):	**Ընդունվել է**

	ՀՀ Կառավարություն		Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Օրենքի 139-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 12.1 մասով. «12.1. Եթե Սահմանադրական դատարանը Հանրապետության նախագահի ընտրության արդյունքով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծման վերաբերյալ գործերով ընդունված որոշմամբ նշանակել է նոր ընտրություն, ապա որոշումն ընդունելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, կարող են առաջադրվել Հանրապետության նախագահի նոր թեկնածուներ, իսկ տասնօրյա ժամկետում անցկացվում է Հանրապետության նախագահի նոր ընտրություն:»:	**Ընդունվել է.** Կատարվել է համապատասխան լրացում (նախագծի հոդված 44)	**Ընդունվել է**